



European Training Foundation

EUROPEAN TRAINING FOUNDATION

Պրակտիկայի բարելավման և աշխերտության
խթանման գծով ուսումնասիրության նախնական
արդյունքները

Արայիկ Նավոյան, ԵԿՀ ազգային փորձագետ navoyana@yahoo.fr

Ձևավորենք հմտություններ ապագայի համար. աշխատանքի վրա հիմնաված ուսումնառության
ռազմավարությունը Հայաստանում
| 26-րդ մայիսի 2019թ. | Արմենիա Մարիոթ հյուրանոց



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Մեթոդաբանություն
- Պրակտիկայի տեսակները եվ նպատակները
- ՄԿՈՒ համակարգում պրակտիկայի հիմնական խնդիրները
- Բարելավման առաջարկներ պրակտիկայի տարբեր կողմերի վերաբերյալ
- ԱՀՈՒ իրախուսման ֆինանսական և ոչ-ֆինանսական միջոցները
- Տոկուս խմբային քննարկման հիմնական արդյունքները
- Ամփոփում

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով ՄԿՈՒ մասնագիտությունների բազմազանությունը, պրակտիկաների կազմակերպման, գնահատման և ֆինանսավորման ներկայիս հիմնախնդիրները բարելավման ուղիները նախ սահմանվել են ընդհանրական մակարդակում:

Այուհետև պրակտիկայի բարելավման առաջարկվող գործիքակազմը ներկայացվում է կոնկրետ՝ միջին մասնագիտական կրթության 0811.07.5 «Անասնաբուծություն» մասնագիտության օրինակով.

Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության (ԱՀՈՒ) գծով ֆինանսական և ոչ-ֆինանսական խրախուսման միջոցների վեարբերյալ նախանական եզրակացությունները հիմնված են գործատուների և նրանց ներկայացուցիչների հետ ֆոկուս խմբային քննարկման արդյունքների վրա:

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հայաստանի ՄԿՈՒ համակարգում պրակտիկայի նապատակներն են.

- *Ուսումնական պրակտիկա* - նպատակն է յուրացված տեսական գիտելիքների ամրապնդումը և ուսանողին ընտրած մասնագիտության կիրառական հիմունքներին, մասնագիտության առանձնահատկություններին ծանոթացնելը, որի արդյունքում ուսանողը պետք է ձեռք բերի նախնական մասնագիտական կարողություններ և ունակություններ:
- *Արտադրական պրակտիկա* - Արտադրական պրակտիկայի հիմնական նպատակն է ուսանողների մոտ գործնական աշխատանքների հիման վրա մասնագիտական հմտությունների և կարողությունների ձեռք բերումը:
- *Նախաավարտական (նախադիպլոմային)* - որպես ուսանողի ուսուցման վերջնական փուլ իրականացվում է տեսական ու պրակտիկ ծրագրերի յուրացումից հետո և ուղղված է դիպլոմային նախագծի/աշխատանքի պատրաստմանն ու պաշտպանության նախապատրաստմանը:

ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ձեռնարկությունները հետաքրքրված չեն պրակտիկանտներ ընդունելու:
- ՀՀ Աշխատանքային օրենսգրքում բացակայում են պրակտիկայի վերաբերյալ առանձին կանոնակարգումները:
- Պրակտիկաների ծրագրերը և գնահատման չափանիշները ձևավորվում են ՄԿՈՒ հաստատություններում՝ առանց մասնագիտության ոլորտի և պրակտիկայի ձեռնարկությունների ներգրավման:
- ՄԿՈՒ հաստատության ներսում իրականացվող ուսումնական պրակտիկաները ըստ էության գործնական աշխատանքներ են, որոնք կազմակերպվում են հաստատության ունեցած լաբորատոր և արտադրական բազայի վրա՝ դասախոսների կողմից:
- Պրակտիկայի գնահատումը անարդյունավետ է, որը պայմանավորված է դեռևս խորհրդային ժամանակներից մնացած գնահատման ընթացակարգով՝ պրակտիկայի օրագրի օգտագործմամբ և հիմնականում առանց պրակտիկանտ ընդունող կազմակերպության հետ պրակտիկայի ծրագիրը, գնահատման չափանիշներն ու մեթոդները նախապես քննարկելու և հանաձայնեցնելու:
- Բացակայում են պետության կողմից ֆինանսական և ոչ-ֆինանսական խթանները՝ կազմակերպություններին խրախուսելու պրակտիկանտներ ընդունել:
- Չկան պրակտիկայի ընթացքում սովորողների բժշկական և արտադրական պատահարներից ապահովագրության առանձին կարգավորումներ:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ- 1/2

Որպես պրակտիկայի բարելավման առաջին քայլ առաջարկվում է նախ հստակեցնել դրա նպատակը և տեղը ՄԿՈԻ մասնագիտությունների կրթական ծրագրերում: Մասնավորապես, առաջարկվում է.

- ՄԿՈԻ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներով սահմանված ուսումնական պրակտիկայի ժամաքանակը բաշխել արտադրական պրակտիկայի և գործնական պարապմունքներին միջև:
- Արտադրական պրակտիկան դիտարկել որպես առանձին կրթական մոդուլ՝ ուսումնառության հստակ ձևակերպած վերջնարդյունքներով և համապատասխան ակադեմիական կրեդիտների տրամադրման հնարավորությամբ:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ- 1/2

Միջին մասնագիտական կրթության 0811.07.5 «Անասնաբուծություն» մասնագիտության պարագայում պետական կրթական չափորոշիչով և ուսումնական պլանով պրակտիկաներին հատկացված է 32 շաբաթ, որից 28-ը՝ ուսումնական, իսկ 4-ը՝ արտադրական պրակտիկաների համար:

Նոր մոտեցմամբ առաջարկվում է սահմանել պրակտիկայի մեկ՝ *արտադրական տեսակ*, իսկ չափորոշիչով սահմանված պրակտիկայի շաբաթները ըստ կուրսերի վերաբաշխել հետևյալ կերպ.

- 12 շաբաթ՝ ըստ մոդուլների գործնական պարապմունքներին 3 տարիների ընթացքում,
- 8 շաբաթ՝ պրակտիկա 2-րդ կուրսում:
- 12 շաբաթ՝ պրակտիկա 3-րդ կուրսում:
- Արտադրական պրակտիկաների ժամկետները ըստ կիսամյակների սահմանելիս հաշվի առնել անասնաբուծական աշխատանքների սեզոնային ժամկետները:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ. «ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ 3-ՐԴ ԿՈՒՐՍԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄՈԴՈՒԼԸ

Մոդուլի դասիչը	
Մոդուլի նպատակը	<p>Այն հետապնդում է երեք հիմնական նպատակ.</p> <ul style="list-style-type: none"> - ՄԿՈՒ հաստատությունում ուսումնառության ընթացքում ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքների կիրառում գործնականում՝ կենդանիների հիվանդությունների ախտորոշման, բուժման, վիրահատական, ծննդության և արհեստական սեմնավորման, կենդանական ծագում ունեցող հումքի անասնաբուժասանիտարական փորձաքննության և հակահամաճարակային միջոցառումների անցկացման աշխատանքների գծով, - Ուսումնառություն մասնագիտական աշխատանքի միջոցով, - կազմակերպությունում ձեռք բերված հաղորդակցության և մասնագիտական աշխատանքի փորձի շնորհիվ ուսանողների աշխատանքի տեղավորման աջակցում:
Մոդուլի տևողությունը	12 շաբաթ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն անցնելու համար անհրաժեշտ են 1-ին և 2-րդ կուրսերի ընդհանուր ու մասնագիտական և 3-րդ կուրսի մասնագիտական առարկաների ուսումնառությամբ ստացած գիտելիքներն ու ունակությունները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է, որը ամփոփվում է կազմակերպությունում պրակտիկայի պատասխանատուի և ՄԿՈՒ հաստատությունից պրակտիկայի ղեկավարի կողմից՝ համապատասխանաբար պրակտիկանտի աշխատանքների, վարքագծի և ներկայացված դիպլոմային աշխատանքի գնահատմամբ ու պաշտպանությամբ: Պրակտիկայի վերջնական գնահատականը կազմակերպությունից պրակտիկայի պատասխանատուի և ՄԿՈՒ հաստատությունից պրակտիկայի ղեկավարի գնահատականների միջինն է:

«ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ 3-ԸՂ ԿՈՒՐՍԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄՈԴՈՒԼԸ

ՈՒսումնատության արդյունք 1	Կենդանիների հիվանդությունների ախտորոշում և եզրակացության պատրաստում:
Կատարման չափանիշներ	1) Կենդանիների հիվանդությունների ախտորոշումը կատարված և եզրակացությունը պատրաստված է համաձայն սահմանված ընթացակարգի:
ՈՒսումնատության արդյունք 2	Կենդանիների տարբեր սեռահասակային խմբերի, հիվանդ կենդանիների խնամքի և պահվածքի համար անհրաժեշտ գոհիզիենիկ և մասնակի բուժիչ միջոցառումների կատարում
Կատարման չափանիշներ	1) Կենդանիների տարբեր սեռահասակային խմբերի, հիվանդ կենդանիների խնամքի և պահվածքի համար անհրաժեշտ գոհիզիենիկ ու մասնակի բուժիչ միջոցառումները ժամանակին ու ըստ սահմանված նորմերի կատարված են:
ՈՒսումնատության արդյունք 3	Անասնաբուժական նախնական ախտորոշման և բուժման աշխատանքի կատարում՝ անհրաժեշտ գործիքների և սարքավորումների կիրառմամբ:
Կատարման չափանիշներ	1) Հատուկ սարքավորումների և գործիքների կիրառմամբ համապատասխան ախտորոշումը և անհրաժեշտ բուժումը ըստ ընթացակարգի պահանջների կատարված է:
ՈՒսումնատության արդյունք 4	Անհետաձգելի իրավիճակներում կենդանիներին առաջին բուժօգնության ցուցաբերում:
Կատարման չափանիշներ	1) Անհետաձգելի իրավիճակներում առաջին բուժօգնությունը ցուցաբերված է կենդանիներին:
ՈՒսումնատության արդյունք 5	Եղջույրների և ամորձիների վիրահատման ու կճղակների մշակման գործողությունների կատարում:
Կատարման չափանիշներ	1) Եղջույրների վիրահատությունը և ամորձատուումը կատարված են, վերքերը և կճղակները մշակված են ըստ սահմանված ընթացակարգերի պահանջների:

«ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ 3-ՐԴ ԿՈՒՐՍԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄՈԴՈՒԼԸ

- Պրակտիկայի համար առանձին մոդուլ սահմանելիս անհրաժեշտ է որդեգրել ճկուն մոտեցում.
 - հաշվի առնել ՄԿՈՒ տարբեր մասնագիտությունների (օրինակ արվեստի ոլորտի մասնագիտությունների) առանձնահատկությունները
 - նախատեսելու ուսանողների պրակտիկաների իրականացման տարբեր ձևեր և դրանք համադրելու ճկունություն :
- Նման մոտեցումը հատկապես անհրաժեշտ է, երբ ՄԿՈՒ տվյալ մասնագիտության ոլորտում կա ձեռնարկությունների պակաս և տեխնիկապես հնարավոր չէ պրակտիկայի մոդուլում սահմանված ուսումնառության վերջնարդյուքները ապահովել մեկ ձեռնարկությունում:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

- Պրակտիկայի ընթացքում ուսանողին իրական աշխատանքներում ներգրավելը մեծ մասամբ պայմանավորված է պրակտիկայի կազմակերպման գործընթացում կազմակերպության ի սկզբանե ակտիվ ներգրավմամբ:
- Այն հնարավորություն կտա պրակտիկայի համար *համատեղ* սահմանել յուրաքանչյուր մասնագիտության բնագավառում արտադրական, առևտրային գործունեության կամ ծառայությունների մատուցման ցիկլերի իրականացմանն անհրաժեշտ կարողությունների և հմտությունների շրջանակ ու հանձնարարվող կոնկրետ աշխատանքներ:
- ՄԿՈՒ կոնկրետ մասնագիտության գծով պրակտիկայի նպատակների և ծրագրերի քննարկումը ընդունող կազմակերպության ներկայացուցիչների հետ իրականացնելու համար առաջարկվում է օգտագործել առանձին ձևաչափ:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- Պրակտիկայի նկատմամբ ուսանողների պատասխանատվությունը մեծացնելու և հետագայում մրցույթով աշխատանքի ընդունվելուն անհրաժեշտ փորձառությունն ձեռք բերելու նպատակով առաջարկվում է պրակտիկատների ընտրությունը ընդունող կազմակերպությունում իրականացնել հարցազրույցի միջոցով ուսանողների կողմից ներկայացված թեկնածությունների հիման վրա:
- Միաժամանակ անհրաժեշտ է խրախուսել ուսանողների կողմից պրակտիկայի վայրի որոնումը՝ օգտագործելով արդեն հաստատված պրակտիկայի առաջարկը ընդունող կազմակերպության հետ պրակտիկայի պայմանները «բանակցելիս»:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ. ՎԵՐԱՀՄԿՈՒՄ - 1/2

ՄԿՈՒ հաստատությունից նշանակված պրակտիկայի ղեկավարը՝

- ապահովում է պրակտիկայի բնականոն ընթացքը, սակայն աշխատանքի վայրում պրակտիկանտի մասնագիտական կրթության հարցում կազմակերպությունում պրակտիկայի պատասխանատուին չի փոխարինում,
- օգնում է կազմակերպությունում պրակտիկայի պատասխանատուին և պրակտիկանտին հարցեր կամ դժվարություններ ծագելիս
- նախաձեռնում է պրակտիկայի միջանկյալ գնահատումը
- խորհուրդներ է տալիս ուսանողին՝ հաշվետվության կամ դիպլոմային աշխատանքի վերաբերյալ
- անհրաժեշտության դեպքում կազմակերպում է պրակտիկանտի հանդիպումը ՄԿՈՒ հաստատության համապատասխան մասնագետների հետ
- գնահատում է պրակտիկայի հաշվետվությունը կամ դիպլոմային աշխատանքը և մասնակցում է վերջինիս պաշտպանությանը:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ. ՎԵՐԱՀՄԿՈՒՄ - 2/2

Կազմակերպությունում պրակտիկայի պատասխանատուն՝

- զբաղվում է պրակտիկանտի ընդունմամբ և ամենօրյա ղեկավարմամբ
- օգնում է պրակտիկանտին բացահայտելու կազմակերպությունը
- հստակեցնում է հանձնարարվող աշխատանքները և պարտականությունները
- ապահովում է աշխատանքների արդյունավետ իրականացմանն անհրաժեշտ տեղեկատվության ու հմտությունների փոխանցումը
- հետևում է պրակտիկանտի անհատական ու մասնագիտական վարքագծին և դրա բարելավմանը
- իրականացնում է պրակտիկանտի աշխատանքների գնահատում՝ ՄԿՈՒ հաստատության հետ նախապես համաձայնեցված գնահատման թերթիկի օգնությամբ:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ. ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Պրակտիկայի արդյունքում պատրաստվող հաշվետվության և դիպլոմային աշխատանքի վերաբերյալ սահմանվում են պահաջներ, որոնք նպատակ ունեն ապահովել ուսանողի կողմից պրակտիկայի մոդուլով նախատեսված կարողությունների ձեռք բերումը:
- ՄԿՈՒ կոնկրետ մասնագիտության բնույթով պայմանավորված հանձնարարվող դիպլոմային աշխատանքը կարող է վերաբերվել.
 - պրակտիկայի ընթացքում իրականացված աշխատանքներին և դրանց վերաբերող հիմնական տեսական թեմայի կամ թեմաների,
 - պրակտիկայի աշխատանքներին ուղղակիորեն չառընչվող տեսական թեմայի
 - նշված երկու տարբերակների համադրությանը:

ԱՀՈՒ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

- *Հարկային նվազեցում.* Նվազեցումը վերաբերվում է ԱՀՈՒ գծով արված ծախսերին, որոնք հանվում են ամբողջ եկամտից՝ պակասեցնելով հարկվող եկամուտը:
- *Հարկային կրեդիտ.* Հարկային պարտավորության ուղղակի պակասեցում՝ ըստ տրամադրված գումարի չափի:
- *Հարկերից ազատում.* Վերաբերվում է կոնկրետ միավորի գծով հարկի կրճատմանը կամ զրոյացմանը:
- *Հարկերի զեղչ.* Հարկման ցածր դրույքների կիրառում որոշակի կատեգորիայի հարկատուների համար:
- *Սուբսիդիա/դրամաշնորհ.* Կառավարության կամ այլ պետական մարմնի կողմից տրամադրվող կոնկրետ գումար՝ աջակցելու ԱՀՈՒ ներդրմանը:

ԱՀՈՒ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ՈՉ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

- *ԱՀՈՒ ծրագրերի վերանայում.* կազմակերպությունների և սովորողների կարիքների համակշռում:
- *Կարողությունների զարգացում.* Կազմակերպությունների՝ դասավանդման ու վարչական կառավարման կարողությունների զարգացում, հատկապես ՓՄՁ մոտ:
- *Ձեռնարկության հեղինակության բարձրացմանն ուղղված նախաձեռնություններ.* ԱՀՈՒ ծրագրերում ներգրավված կազմակերպությունների սոցիալական պատասխանատվության արժևորում և հեղինակության բարձրացում՝ նպաստելով վաճառքների ավելացմանը:
- *Օրենսդրական կարգավորումներ.* Կազմակերպություններից պահանջել աշկերտներ ընդունել կամ տրամադրել արտոնություններ ԱՀՈՒ տրամադրելու դեպքում:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

- Գործատուների կարիքները հաշվի առնող և ՄԿՈՒ հաստատությունների ու սովորողների հետ ԱՀՈԻ ծրագրերում համագործակցությանը խրախուսող ֆինանսական և ոչ-ֆինանսական կառուցակարգեր գոյություն չունեն:
- «Հայաստանում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության զարգացման հայեցակարգ և 2019-2025թթ. գործողությունների ցանկ» փաստաթղթում նախատեսվել է.
 - *«ԱՀՈԻ ծրագրերի իրականացման համար պետության կողմից պետական նպատակային սուբսիդիաների, հարկային, մաքսային ու սոցիալական վճարումներից արտոնություն տրամադրելու կանոնակարգի մշակում»:*

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ - 1/4

- Առաջնայինը ուսանողների արդյունավետ ներգրավումն է կազմակերպություններում և մասնագիտական փորձառության ձեռք բերումը՝ առանց պարտադրելու վարձատրել սովորողին :
- Առաջարկվեց ԱՀՈԻ ներգրավված սովորողի վարձատրության սահմանման սխեմա. առաջին 2-6 ամիսները առնաց վարձատրության, իսկ հետագայում մասնագիտական հմտությունների ձեռք բերմանը զուգահեռ նվազագույն աշխատավարձի 50 % վճարում, որը կարող է հասնել 100 %-ի վերջին կուրսի ուսանողների դեպքում:
- Հարկերից ազատումը մասնակիցների կողմից համարվեց առավել արդյունավետ ֆինանսական խրախուսման միջոց: Միաժամանակ նշվեց, որ հարկերից ազատման համակարգը պետք է նպաստի կազմակերպության կողմից ԱՀՈԻ միջոցով անհրաժեշտ կադրերի պատրաստմանը՝ փոխարենը աշխատանքի շուկայում նրանց փնտրելու:

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ - 2/4

- Հարկերից ազատում տրամադրելիս նախապատվությունը կարելի է տալ տնտեսության կոնկրետ ոլորտի, որը համարվում է առաջնահերթություն:
- Առաջարկվեց, որ պետությունը օրենսդրական կարգավորումների միջոցով կազմակերպություններին խրախուսի ներգրավվել ԱՀՈԻ ծրագրերում:
- Մասնակիցների կարծիքով կարողությունների զարգացումը կարող է արդյունավետորեն բարձրացնել կազմակերպությունների ԱՀՈԻ ծրագրերում ներգրավելու մոտիվացիան, հատկապես ՓՄՁ դեպքում:
- Ձեռնարկության հեղինակության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունները որպես ոչ-ֆինանսական խրախուսման միջոց հավանության արժնացան քննարկման բոլոր մասնակիցների կողմից:

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ - 3/4

- Հարկերից ազատումը որպես ֆինանսական խրախուսման միջոց օգտագործելիս անհրաժեշտ է հստակորեն սահմանել դրա կառուցակարգը՝ հարկերից ազատումը հասցեագրելով այն կազմակերպություններին, որոնք իրապես ներգրաված են աշկերտության / դուալ կրթության ծրագրերում:
- Բոլոր դեպքերում ոլորտային առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն:
- Անհրաժեշտ է հատկապես հաշվի առնել ՓՄՁ կարիքները, մասնավորապես մարզերում:

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ - 4/4

- Առաջարկվեց նաև իրականացնել ընդհանուր հետզոտություն՝ պարզելու կոնկրետ ոլորտների, մարզերի և երկրի մակարդակում ներգրավված շահեկիցների կարիքները :
- Կարևորվեց նաև տարբեր միջոցներով (հեռուստատեսություն, մամուլ, սոցիալական ցանցեր և այլն) ԱՀՈՒ օգուտների վերաբերյալ տեղեկատվության տարածումը և հայաստանյան հաջողված փորձի ներկայացումը՝ նպաստելու ԱՀՈՒ մասին տեղեկացվածության բարձրացմանը և դրանում սովորողների, ՄԿՈՒ հաստատությունների ու կազմակերպությունների ներգրավման մոտիվացիայի բարձրացմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

- ՄԿՈԻ պրակտիկայի՝ որպես ԱՀՈԻ գործող ձևի բարելավումը ԱՀՈԻ հայեցակարգում նախատեսված է 2019թ.:
- Պրակտիկայի բարելավմանն ուղղված առաջարկությունները հիմք են դրանք կոնկրետ մասնագիտության և հաստատության համատեքստում տեղայնացնելու:
- Ճոկուս խմբային քննարկման նախնական արդյունքներն ու համապատասխան խրախուսման ֆինանսական և ոչ-ֆինանսական միջոցների վերաբերյալ առաջարկները կներառվեն առանձին հաշվետվության մեջ նպաստելու ԱՀՈԻ ֆինանսավորման գծով հետագա ուսումնասիրությունների և որոշումների կայացմանը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

END CONTACT SLIDE

Website

www.etf.europa.eu

Twitter

[@etfeuropa](https://twitter.com/etfeuropa)

Facebook

facebook.com/etfeuropa

YouTube

www.youtube.com/user/etfeuropa

Instagram

instagram.com/etfeuropa/

LinkedIn

linkedin.com/company/european-training-foundation

E-mail

info@etf.europa.eu



European Training Foundation

